11560
11561

891.99
Կ-14

891.99

*Հրատարակութիւն Սիմէօն Պառաւեանցի.*

ՍԵՐՈԲԵԱՆ - ԻՆՃԻԿԵԱՆԻ

# ԱՇԸՂ-ՀԱՃԻԸԻ

## ԵՐԳԵՐԸ.

36796

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐ.

2013

2003

ՄՈՍԿՈՒԱ.
ՏՊԱՐԱՆ ՄԿՐՏԻՉ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆԻ.
1892

2712

Дозволено Цензурою. С.-Петербургъ, 17 Іюня 1891 года.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Ի ՅԻՇԱՏԱԿ №38
ՅՈՒՂԱԲԵՐ
ՍԵՐՈԲՅԱՆ-ԻՆՃԻԿՅԱՆԻ
Ի 23-Ն ՀՈՒՆՎԱՐԻ 1929 Թ. ԹԻՖԼԻՍ

Ի ՅԻՇԱՏԱԿ
ՅՈՒՂԱԲԵՐ
ՍԵՐՈԲԵԱՆ-ԻՆՃԻԿԵԱՆ
23 ՅՈՒՆՈՒԱՐԻ 1929 ԹՈՒԻ
38

## ԴԻՒԱՆԻ.

Սիրելի, ձեռքդ դէպի ինձ ձգիր, քեզնից աջ կուզեմ,
Ճշմարիտ երդւում եմ՝ Աստուած, երկինք գետինք խաչ կուզեմ,
Քեզ մօտ առանձին գործ ունիմ՝ ուրիշ բան չմտածես.
Ամպակոլոր, լուսակամար երեսիցդ պաչ կուզեմ։

Արդեօք քեզ նման գեղեցիկ ուրիշ էլ ճարւած կլի,
Ինձնից առաջ քո տեսնողի խելքը ողջ տարած կլի,
Ցայտնի բան է, որ առանց քեզ կեանքըս խաւարւած կլի,
Համարեա, թէ ես իմ մահս քեզնից առաջ կուզեմ։

Ես կուզեմ, իմ սիրեկանըս աշխարհում հզօր լինի,
Վերջապէս նրա մահը և իմ մահը մէկ օր լինի.
Ի՛նչ անէ այն այգեպանը, որ իւր այգին չոր լինի.
Հազիրն եմ, իմ բուրաստանս, պարտէզս կանանչ կուզեմ։

1873 ամի, յունիսի 12-ին.

## ԹԻՖԼԻՍ.

Աշղու, կարող զօրութեամբը ուռեցաւ.
Ո՜վ մարդ, տունդ մաքուր պահէ առաւել,
Յուդէն Յիսուսին մատնելով ուրացաւ —
Երկիւղ չքաշելով՝ կաշառք առաւ էլ։

Աչքերէս արտասունք է թափում՝ այս է լաւ,
Հոգու համար ապաշխարանք՝ այս է լաւ,
Տւած օգուտդ հաշւեցի՝ այս է լաւ,
Կամենաս փոխանորդը ինձնից առաւել։

Հազրուս բարով անցնի հազար օրս,
Մէկ հայուն ինչ պատասխան տայ հազար օրս,
Հայրը հովիւ, որդին վեց հազար օրս
Քաջ իմաստուն, Սողոմոնից առաւել։

1872 ամի, յունվարի 6-ին.

## ԴԻՒԱՆԻ.

Սիրելիք, այս փուչ աշխարհում շատն ուրախացաւ գնաց,
Ինչպէս որ մէկ գարնան ծաղիկ՝ շուտ ոչնչացաւ գնաց.
Ո՜վ մարդ, արթուն կաց, չը գիտես, թէ երբ պէտք է մահանաս,
Սողոմոնն էլ շատ աշխատեց, բայց չիմացաւ գնաց։



Մարդուս միտքը շատ երկար է, անդունդի խորի նման,
Որքան կուզէ շատ ծերանայ, միտք ունի նորի նման.
Հարիւր տարւայ մարդուս կեանքը կանցնի մէկ օրի նման,
Օրինակ Սիմոն ծերունին չափաղանց կացաւ գնաց։

Հոգին զրկւած մարդու կեանքը, փառք ունայն է, զուր է,
Նա միշտ սիրտը կը բորբոքէ՝ յաւիտենական հուր է,
Եթէ իմ սրտակիցներս հարցնեն Հազիրն ո՞ւր է,
Ասացէք մէկ հիւրի նման եկաւ ու անցաւ գնաց։

1874 ամի, յուլիսի 9-ին.

## ԴՕՇՄԱՆ.

Ես կը սիրեմ այնպիսի եղբայրները,
Թշնամու տեղ իրար են վնաս տալի.
Կեցցե՛ն մեր ազգասէր հայ իշխանները՝
Թատրոն թողած դէպի ցիրկ են վազ տալի։

Որքան մենք թշնամու առաջի ենք դողում,
Նա աւելի է մեզ վերայ կատաղում,
Մեր որդիքը առանց ուսում ենք թողում,
Օտարի որդուն ենք գնում դաս տալի։

Այս օրին արժանանալն է մեր մեղը,
Այսպիսով գերան չի դառնալ մեր ծէղը.
Թշնամուցը վրէժ առնելու տեղը
Մեր որդուն եղբօրն ենք պատուհաս տալի։

Շատ կայ հայոց մէջը այսպիսի խնդիր,
Բայց որտեղից վերցրել ես տեղը դիր.
Ո՞վ դու Թշուառ, խեղճ, ողորմելի Հագիր,
Ի՞նչ ես աւել պակաս գլխիցդ դուրս տալի։

1875 ամի, փետրուարի 14-ին.

## ՄՈՒԽԱՄԲԱԶ.

Ամեն կողմով տկար մարդը
Մեռած լաւ է քան թէ կենդան.
Անբախտ, անջան, յիմար մարդը
Մեռած լաւ է քան թէ կենդան։

Սրտ չի բուսնի աղանձը,
Մարդուն շնորհք չի տայ գանձը,
Զախազանց պլակերպ անձը
Մեռած լաւ է քան թէ կենդան։

Քար չի փափկացնի խուղը,
Օրհնեալ է բարի պտուղը,
Պիղծ, անամօթ աներկիւղը,
Մեռած լաւ է քան թէ կենդան։



Մէկ ձիուցը լաւն է մէկ ձուն,
Մէկ լաւն արժէ վատ երեսուն,
Նախանձ սիրտ, բամբասող լեզուն
Մեռած լաւ է քան թէ կենդան։

Գայլեցը չի ծնուի գառը,
Ոչ վատ բերանից լաւ բառը,
Հակառակ չարի պատճառը,
Մեռած լաւ է քան թէ կենդան։

Այն մարդու գլխին հողը,
Ով որ միշտ պաշտում է փողը,
Առանց ի չափ հարբեցողը
Մեռած լաւ քան թէ է կենդան։

Անողորմ ունևորը,
Մոքով խաւար մեծաւորը,
Փուճ ստախօս կեղծաւորը
Մեռած լաւ է քան թէ կենդան։

Էլ ո՞վ է ճանաչում ումը,
Էփածի համ չունէ հումը,
Աղքատ, հպարտ անուսումը
Մեռած լաւ է քան թէ կենդան։

Այսքան վատ նշան կծնուի,
Մեղքը ում վերայ որ դնուի,
Թէ Հագրու մէջ գտնուի—
Մեռած լաւ է քան թէ կենդան։

1872 ամի, յուլիսի 10-ին.

## ԴՕՇՄԱՑ.

Կոտրած կուան ձեռքի մատը պէտք չէ,
Այնուհետեւ չի տար տիրոջը օգուտ.
Քիչ լաւը լաւն է, շատ վատը պէտքը չէ,
Որ ոչ մէջը համ կայ, ոչ խորհուրդ, ոչ նիւթ։

Խաչին զօրացնողն է միշտ իւր տէրը,
Ընկերին ուղղեցնողն է ընկերը,
Բռռանան այնպիսի պարզ, բաց աչքերը,
Որի գլուխն է անխելք միտք, խաւար մութ։

Հաղիրս չեմ քնած, ես արթուն կասեմ,
Ունիմ գանգատ սոխակից, վարդուն կասեմ.
Լաւ բանաստեղծ այն մարդուն կասեմ—
Կարճ խօսքի մէջ մոցնի երկար խորհուրդ։

1876 ամի, մայիսի 14-ին.

## ՍԱՄԱՑԻ.

Չկայ աշխարհումը ցաւերու մէջ տանջուող ի զուր ինձպէս,
Հեռացած ամենայն լաւութիւնից իստակ, մաքուր ինձպէս,
Հանապազ ոտքի տակին քար ու քանդ եղած կտուր ինձպէս,
Չկարծեմ, թէ լինի մէկ մարդ տկար, անբախտ, տխուր ինձպէս
Դիմացող ցաւերուն, հաստատ, երեսը պինդ, ամուր ինձպէս։



Չկայ լոյս ինձ համար, ես շրջում եմ խաւարի մէջը.
Կը հալէր հաստատ, եթէ իմ ցաւըս մտնէր քարի մէջը.
Մէկ ամիս ուրախութիւն չտեսայ, ես մէկ տարի մէջը.
Միթէ ինձանից էլ էլ աւել չկար մարդ աշխարհի մէջը.
Չկարծեմ թէ լինի մէկ մարդ տկար, անբախտ, տխուր ինձպէս
Դիմացող ցաւերուն, հաստատ, երեսը պինդ, ամուր ինձպէս:

Որքան աշխատեցի, տուն շինեցի՝ այնքան աւեր տեսայ,
Թուան սոխակներս անգին՝ նրանց տեղը հաւեր տեսայ,
Մնացի ես միշտ երանի տալով, որտեղ լաւեր տեսայ.
Փթեց սիրտըս վատութեան մէջ, օր ըստ օրէ ցաւեր տեսայ.
Չկարծեմ թէ լինի մէկ մարդ տկար, անբախտ, տխուր ինձպէս
Դիմացող ցաւերուն, հաստատ, երեսը պինդ, ամուր ինձպէս։

Ի՞նչ ես դու այդպէս չարաչարգանգատուում այդքան հաղիր,
Տիրոջ դատաստանը արդար է, գիտէ տեղը արժան հաղիր,
Դեռ քիչ է այդքան ցաւը քեզ հպարտ, ինքնահաւան հաղիր,
Վատ, անիրաւ, փուչ, խաբեբայ, կեղծաւոր, անպիտան
Հաղիր·

1879 ամի, մարտի 10-ին.

## ԳՈՒԲԼԻԹԻ.

Ցաւուկ խնդրեմ այս բանդից
Ինձի ազատես, սիրեկան.
Ցաւերս ես քեզ յայտնեմ՝
Տես ինչ գանգատ է, սիրեկան։

Խնդրեմ շուտ շուտ մօտս գաս,
Դու էլ ինձի պէս չնստես լաս,
Աւել չէ մէկ մէկ բարև տաս՝
Այն էլ ինձի շատ է, սիրեկան։

Թշնամիներում չեմ կորցնի,
Իմ ողջ սիրտս չեմ մեռցնի
Քեզնից ձեռքս չեմ վերցնի,
Կուզես դու ատէ, սիրեկան։

1868 ամի, յուլիսի 5-ին.



## ՄՈՒԽԱՄԲԱՋ.

Աստուած մէկ է, փառքը անթիւ,
Մարդը զանազան է, յատուկ,
Շատ դժուար ճանաչելու է,
Փորձել արժան է յատուկ։

Միշտ Աստծուն նկատողը,
Անիրաւներուն ատողը,
Մարդու շուտ չհաւատացողը
Խելօք գիտնական է յատուկ։

Մարդու ցաւ շուտ իմացողը,
Իւր խղճի դուռը բացողը,
Աղքատին ողորմացողը
Բարերար իշխան է յատուկ։

Յոյս ու հաւատ հաստատողը,
Փորձանքէն մարդ ազատողը,
Մոլորուածին խրատողը
Սրբոց օգնական է յատուկ։

Հոգուն շահ ու արին թափողը,
Չար սատանին խաբողը,
Աղտոտ մարդկերանց սրբողը
Մաքուր աւազան է յատուկ։

Թանգ արժէ իմաստութիւնը,
Ի՞նչ է յիմար մեծատունը,
Մարդուս մէկ բարի անունը
Մեծ պարգևի նշան է յատուկ։

Հավիր, չխաբւես ապրուստին,
Աղքատն է պաշտում Հարուստին,
Որդի Աստծոյ գալստին
Ուղիղ դատաստան է յատուկ։

1869 ամի, ապրիլի 10-ին.

## ԴԱՍԻԴԱՆԻ.

Ծնողներիցըս որ մնացինք երկու քոյր,
Ես Հոռոմսիմ, փոքրիկ քոյրս Մարիամ,
Մնացինք մոլորւած ինչպէս որ մէկ կոյր,
Չունեցանք մեզ պահապան, մէկ բարեկամ։

Երկուսըս առանց տէր մենակ մնացինք,
Մէկըս միւսի համար կրակ մնացինք,
Ապրուստի կողմից դատարկ մնացինք,
Բան չէ գտնւի մեզ վերայ մէկ դրամ։

Մարիամն ինձ ասաւ, քոյրիկ իմ մաքուր,
Մեռնում եմ, երբոր քեզ տեսնում եմ տխուր,
Ինձի ծախիր, առ քեզ համար կերակուր.
Ասացի, առանց քեզ մենակ ո՞նց մնամ։

Ասացի, Մարիամ ջան, մեզ ոչ հայր ունինք,
Եղբօրից զրկւած և ոչ մայր ունինք,
Յիշում ես, որ մեզ մէկ հօրեղբայր ունինք,
Ա սուհետև փնտրենք նրան ամեն ժամ։



Ընկանք ամեն երկրի սար ու ձորումը,
Սովածութիւնից նիւթ չկար մեր փորումը,
Թշնամին էլ չլինէր մեր օրումը,
Բողաղներս ցամաք, բերաններս անհամ։

Ման գալով անդադար ու՛ անքուն գտանք,
Մէկ երևելի իշխանի տուն գտանք.
Ասացինք՝ մեր հոգու պահելու սիւն գտանք.
Նա էլ անիրաւ, անխղճմտանք, անխնամ։

Ձեռք ձգեցինք դէպի այն մարդուն լալով,
Պատմեցինք մեր բոլոր ցաւը ողբալով,
Ողորմեա՛ մեզ, պարոն, մեռանք ման գալով,
Համարեա ճար չունինք խօսալու անգամ։

Բարկանալով ասաւ, դուք փատաւոր էք,
Ձեր ծնողիցն է որ այդպէս սովոր էք,
Գնացէք, հեռացէք, այստեղից կորէք,
Մէկըդ անպիտան, միւսըդ անզգամ։

Պարոնը մեր յոյսը կտրեց իւրանից,
Անարգելով մեզ հեռացրեց տանից.
Քոյրս տկար, ես ընկել էի բանից,
Ի՞նչ կլինի, տեղից շարժւել չկարամ։

Մինչև երկու երեք քայլ հազիւ հասանք,
Կայնանք այնտեղ՝ երկուսով լալ ըսկսանք.
Շղթայով կապած մէկ առիւծ շուն տեսանք,
Նա գաղտնի ասաւ ձեզ համար կհոգամ։

Շան առաջին կար մէկ պղինձ կերակուր,
Դեռ չէր դիպել, այնպէս լիքն էր մաքուր.
Խեղճը մեր պատճառով կանգնել էր տխուր,
Մեզ տեսնելով՝ խղճաց, չշարժեց ատամ։

«Զօրս դու պատուիրեցեր» վայելեցինք բաժին.
Անունը շուն էր, բայց գործքն էր Թանգագին,
Պարոնը տանից դուրս եկաւ կրկին
Զարմանալով ասաւ, ես լամ թէ խնդամ։

Շունը դէպր իր տիրոջը հաչելով,
Պոչը դէպի երեխանոցը աղաչելով՝
Հիւր ընկալայ սրանց ոտքին պաչելով,
Իմ բաժինըս սրանցն է ,քանի որ կամ։

Գամբռըն մարդու խեղճի դուռը բաց արաւ,
Նշմարելով ամէն բան իմաց արաւ,
Նոր ընդունեց, տարաւ, պահեց, հաց տւաւ,
Ասաւ, իմն էք, մինչև ապրեմ, ,քանի կամ։

Պարոնը առաջ շատ տգիտութիւն արաւ.
Կեցցէ՛ ով որ կարապետութիւն արաւ,
Շունը պարոնին վարպետութիւն արաւ,
Եղաւ Աստծոյ կողմէն ընտրեալ անդամ։

Մարդը մեղաւոր չէր, այնպէս էր սովոր.
Իմացաւ նրանց անցանքները բոլոր,
Տեսաւ, որ որդիքն էին իւր եղբօր,
Ասաւ, կապեալները ձեզ համար բանամ։

Հազիր այն որբերին կը ճանաչի.
Թո՛ղ պարոնը շանը տեսնի աղաչի,
Դառնայ դէպի որբիկներին աղաչի,
Աչքով տեսնեմ, ականջովս իմանամ։

1879 ամի, յուլիսի 15-ին.



## ՂՕՇՄԱՑ.

Ո՞վ մարդ, հպարտութեամբ երկինքն ես քաշւում,
Փուչ աշխարհիս մէջը պարծանքդ ի՞նչ է.
Սպասի՛ր, տեսնենք, Աստուած ի՞նչ է հաշւում,
Դու քեզ ու քեզ հաշիւ համբարքըդ ի՞նչ է։

Հարստութիւնովդ ես խօսում չարաչար,
Փողով կատարեալ ես, խելքով անկատար,
Հանապազ աշխատում ես մարմնուդ համար,
Հոգուդ համար բարի մաղթանքըդ ի՞նչ է։

Հազիւս որքան գիտենանք՝ պակաս ենք,
Գիտնական մարդոց համար մենք վնաս ենք,
Երկուսով հինգ գազ կտաւին կպասենք,
Ինձանից աւելորդ ապրանքըդ ի՞նչ է ։

1877 ամի, նոյեմբերի 17-ին.

# ՄՈՒԽԱՄԲԱՋ.

Ամէն կենդանի հզօր է,
Միայն դու ես տկար, ա՜յ էշ,
Քո աստիճանըդ ստոր է,
Տանջւում ես անդադար, ա՜յ էշ։

Աշխարհն ամբողջ քեզ է ատում,
Խրատողիդ չես հաւատում,
Ամենից շատ ես ուտում,
Դարձեալ դու ես նիհար, ա՜յ էշ։

Քուկդ է միայն կեր ու խումը,
Խելք չի եղել քո գլխումը,
Ինչո՞ւ ընկերիդ ցեխումը
Թողեցիր ու անցար, ա՜յ էշ։

Գայլը գալիս է քեզ գտնում է,
Յետևիցն ես ընկնում, գնում,
Քո թշնամու իրան բնում
Զոհ ես խոնարհաբար, ա՜յ էշ։

Բարձր զռզռում ես, կանչում,
Չըգիտեմ, ում ես աղաչում,
Ձայնիցըդ էլ չես ամաչում,
Մեծ ամօթ քեզ համար, ա՜յ էշ։

Աւանակներդ ծախւեցին,
Շատերը զինք ինքի կախւեցին,
Ամէն կենդանիք փոխւեցին,
Դու դեռ քու բեռդ տար, ա՜յ էշ։



Չեմ խօսում քեզ մօտ հակառակ,
Եւ ոչ էլ անում եմ կատակ,
Ամերիկէն քեզ օրինակ,
Կըր աչքովդ տեսար, ա՜յ էշ։

Եղած ուժդ էլ կորցրիր,
Գլխումդ խելք չմտցրիր,
Միայն փալանդ թամք դարձրիր,
Ձիու թիւ չը մտար, ա՜յ էշ։

Դու չես ըշտապում, դեռ շուտ է.
Կարծում ես, ասածս սուտ է,
Դու աշխատիր, թո՛ղ ձին ուտէ
Նպատակիդ համար, ա՜յ էշ։

Դու կուզես քեզ համար վնաս,
Որ կողմ քաշ տան, կգնաս,
Մինչև երբ պէտք է էշ մնաս,
Օրըդ, կեանքըդ խաւար, ա՜յ էշ։

Պոչըդ թողեցին անծածան,
Դարձեալ քեզնից չըպրծան.
Դանդաղ տեսան, ջուխտ ջուխտ հեծան,
Թշուառ, ստրուկ, անճար, ա՜յ էշ։

Աշխատիր, այդ էշութիւնըդ
Հեռացնես գէշութիւնդ,
Հագիր, դու էլ շաղութիւնդ
Պաշտպանիր քեզ համար, ա՜յ էշ։

1888 ամի, մայիսի 6-ին.

1008
36796
ՅԻՇԱՏԱԿ ԽՆԴԱԲԵՐ ՌՈԲԷՆ-ԻՆՃԻԿԵԱՆԻ 23 ՅՈՒՆՈՒԱՐԻ 1929 ԹՈՒԻՆ

## ԳՈՐԾԻՈՒԹԻ.

Գիշերն անցաւ, ի՞նչ ես անում,
Քնի՛ր դարձեալ, քնի՛, մայրիկ.
Լուսացել է, չես արթնանում,
Քնի՛ր դարձեալ, քնի՛, մայրիկ։

Գործըդ թողիր կիսատ կտոր,
Զարթի՛ր, որ շարունակես նոր.
Չես գիտեր, թէ եղաւ կէս օր
Քնի՛ր դարձեալ, քնի՛, մայրիկ։

Լաւերդ անպիտանացան,
Հարիւրներդ քսանացան,
Մեռեալներդ կենդանացան,
Քնի՛ր դարձեալ, քնի՛, մայրիկ։

Թեթև ապրուստըդ ծանրացաւ.
Բարձր աստիճանըդ ցածրացաւ.
Ուշըդ ո՞ր ծառին բարձրացաւ,
Քնի՛ր դարձեալ, քնի՛, մայրիկ։

Հոգուս Հասաւ, փափագեցի,
Մազի նման բարակեցի,
Մատով ականջըդ ծակեցի,
Քնի՛ր դարձեալ, քնի՛, մայրիկ։



Նպատակներըդ մնում են,
Թշնամիքըդ խմանում են,
Ագռաւները աչքերդ հանում են,
Քնի՛ր դարձեալ, քնի՛, մայրիկ։

1875 ամի, փետրուարի 16-ին.

ՅԻՇԱՏԱԿ
1929

## ԳԱՍՏԱՆԻ.

Մեզպէս երջանիկ, բաղդաւոր ազգ չկայ,
Միմեանց հետ թշնամանող, հակառակ,
Շատ ճիշտ է, սրան պատասխան, խօսք չկայ.
Այսպէս լաւը աշխարհում մենք ենք միայնակ։

Հաւատացէք չկայ մեզ պէս ազգասէր,
Բարեկամին ատող, չսիրող ընկեր.
Օտարին ծառայող, մնացող անտէր,
Միշտ հանապազ ամօթալի, խայտառակ։

Գտածները ձեռքներիցն ենք կորցնում,
Միմեանց լաւն ու վատը չենք հարցնում.
Մեր շորերը ուրիշին ենք հագցնում,
Ման ենք գալի բոբիկ, տկլոր, անգլխարկ։

Ո՞ւր է, գիտէք մեզ պէս լաւն ամէն բանով,
Բայց մի քիչ պակաս ենք ատրիճանով.
Խոնարհ իշու պէս զուգուած նոր փալանով,
Ծանր բեռը տանող հնազանդ մշակ։

Անպիտան հաւի պէս չգնող հաւկիթ,
Աղքատ ու անուսում, տգէտ, կարճամիտ,
Դուրսը կատու, տանը առիւծ մեծասիրտ,
Մեր որդւոց յաղթող, չար բոց ու կրակ։

Թշնամուն բարեկամի տեղ ճանաչելով,
Օտարի մօտ նոր հարսի պէս ամաչող,
Նեղացնելիս՝ ոտքերը ընկնող, աղաչող,
Ազգի խայտառակիչ, անպիտան զաւակ։

Ասում եմ, չկայ մեզ պէս իրար սիրող,
Մեր որդիքը Թողող, օտարին տիրող,
Մեր ձեռքերով մեր տները աւերող,
Եւրոպացիք կառնեն մեզնից օրինակ։

Մեր ականջներից բռնողի հետ կերթանք,
Այն պատճառով ամենից յետ կմնանք.
Մեր վրէժը Թշնամուցը չառանք,
Զտեսանք մեզանից մէկ սուրբ նահատակ։

Մեր որդիքն էլ մեզանից այս են սովորում,
Ինչպէս իրար համար մենք հոր ենք փորում,
Դեռ շատ կմնանք այս բանտում, խաւարում,
Քանի որ մեր խեղճ գլուխներն է դարդակ։

Օտարները մեզնից օգուտ են քաղում,
Մենք մեր խեղճերի վերայ ենք ծիծաղում,
Մեր հարմնքումը ուրիշներն են խաղում,
Մենք կուլանք, իբրև սգաւոր հասարակ։



Մեզ ի՞նչ օգուտ, այն հայ մեծ շնորհքը,
Որ սիրում է նա օտար ազգի երգը.
Չի՛ հասնիլ հանգստութիւնը մեր ձեռքը,
Դեռ շատ կայ մեր մէջը ազգուրաց Վասակ։

Ասում են, գլուխդ ցաւեց, Հազիր, լաւ, էլի.
Գլուխս ցաւում է, բայց սիրտըս աւելի,
Թո՛ղ, ես մեռնեմ, փառքըս հայն վայելէ.
Զլինեն հայերը իրար հետ ներհակ։

1879 ամի, դեկտեմբերի 18-ին.

ՅԻՇԱՏԱԿ
ԻՍՂԱՐԻՐ
ՕԵՐՈԲԵԱՆ-ԻՆՃԻԿԵԱՆԻ
23 ՅՈՒՆՈՒԱՐԻ 1929 Թ.

## ՄՈՒԽԱՄԲԱՋ.

Շատ «փառք քեզ, Աստուած» ասելով
Խեղճ բերանըս բեզարել է,
Բաղդըս իրան էշն է քշել,
Թշնամին իրանն է արել։

Աստուած էլ է ինձ Թշնամի,
Նա էլ ինձի վատ կըկամի,
Աղաքըս եղել է քամի,
Եղած չեղածս տարել է։

Աչքերըս արիւն է դարձել,
Թշնամուն գարուն է դարձել,
Իմ ծառան պարոն է դարձել,
Իրան ուժով համարել է։

Գերան ունէի, ծեղ չունեմ,
Աստուած գիտէ, ո՞ր մեղ չունեմ,
Սերմըս ձգելու տեղ չունեմ,
Թշնամին հողըս վարել է։

Հասել է ծերութեան ժամըս,
Անկատար մնաց իմ կամըս
Դեռ չը մեռած՝ բարեկամըս
Մահուան պատանքըս կարել է։

Ես մօրից անբախտ ծնեցի,
Էժան տւի, թանգ գնեցի.
Որին ես շատ օգնեցի,
Նա ինքը մուխս մարել է։

Մինչև երբ ես այսպէս մնամ
Ողորմելի և անխնամ,
Կուզեմ, որ իմ տունըս գնամ,
Լափչէքըս ոտըս հարել է·

Այս է իմ ճակատագիրը,
Ո՞վ է լսում իմ խնդիրը·
Ասում են, երգիչ Հագիրը
Խեղճը խենթ է, յիմարել է։

1877 ամի, յուլիսի 13-ին.



ՂԱԼԱՆԴԱՐԻ.

Այնչափ գեղեցիկ, անման, անգին, սիրուն աղջիկ,
Չկայ քեզի պէս աշխարհի մէջ մի սիրուն աղջիկ·
Սիրուն շատը կան գովելու, բայց չէ ասածըս,
Ի սկըզբանիցը մինչև այսօր հին, սիրուն աղջիկ։

Բոլոր բովանդակ աշխարհին՝ դու մայր հոգևոր ես,
Ծնար հրամանով Աստուծոյ, անծին, սիրուն աղջիկ.
Սիրէ Հագրուդ, առաջի որդուդ բարի խօսիր,
Ներէ մեղըս, իմ անմահի մահին, սիրուն աղջիկ։

1875 ամի, նոյեմբերի 10-ին.

## ՄՈՒՇՏԱՂԱՑ.

Ո՞ւր ես, սիրելի, աչքի լոյս, այսքան ժամանակ դու.
Ես քեզ կարօտ եմ շատ.
Ամենաառաջ շնորհք բերող գարնան մանուշակ դու,
Հոտըդ անուշ, հաստատ։
Պատկերքիդ ուղիղ նայողը՝ ինչպէս միայ կենդան,
Դժուար, սիրուն, անփոյթ։
Ցոյց տուր գեղեցիկ պատկերդ ազնիւ արեգակ դու,
Նման չունես մէկ հատ։
Խելքս տարել է քո այդ ազնիւ բնութիւնդ,
Իրաւ, յատուկ, անկեղծ:
Ոչ շատ տաք ես, ոչ շատ սառը, աշնան եղանակ դու,
Տարիդ լի է ու արատ։
Զունիմ բացի քեզ սիրեկան աշխարհի վերայ ես,
Դու ես սիրահարս,
Խղճա՛ Հազրիս, մի՛ թողուր թերանպատակ դու,
Տամ քեզ բարի խրատ։

1876 ամի, մայիսի 10-ին.

---



## ՂՕՃՄԱՑ.

Ով կուզէ ազգային արիւն ունենայ,
Կարդայ հին պատմութեան գրքերը, լաւն են.
Հայոց քաշած նեղութիւնները իմանայ,
Այն ժամանակ ասէ թուրքերը լաւն են։

Հայ ցաւն է շրջում հայի սրտումը,
Ինչով ծիծաղէ, նրանով տրտումը,
Ազգի համար պատերազմի դաշտումը
Թշնամուց ըստացած վէրքերը լաւն են։

Ինձ համար հայն է լաւ այլազգերից,
Վառւած այրւում եմ նրա սէրից
Օտար ազգի պէտքական երգերից՝
Մեր Հազրու անպէտք երգերը լաւն են։

1890 ամի, փետրւարի 10-ին.

---

## ԴԻԽԱՆԻ.

Ցիմարները ծաղր են անում միշտ բան իմացողներին,
Սուտեր խօսին՝ կը հաւատան բախտերը բանողներին.
Կուզես խօսքով բերանիցըդ ոսկի թափես, չեն լսում.
Ա՜խ, հազար անգամ ողորմի երգեր սահմանողներին։

Ոտանաւորներով անէծքը, հայհոյանքն էլ քաղցր է,
Պէտք է քարոզը երգ շինես, տաս չցանկացողներին.
Բայց այս բանը շատ դժուար է, ո՞վ է կարող, սիրելիս,
Վերջը պէտք է փուշ հնձել տան ցորեն հայ ցանողներին։

Հազի՛ր, ի՞նչ ես վիզդ ձգած քաշում չարաչար լուծըդ.
Հաստ ու բարակ մէկ գին ունի, վա՜յ բարակ մանողներին։

1879 ամի, ապրիլի 6-ին.

* * *

Ա՜խ, էլի մէկ աստղը թռաւ երկնքից՝
Բարերար և գիտնական իմաստունի.
Փառք և պատիւ ճարեց, զրկուեց կեանքից,
Որը հաստատ զաւակ էր Հայաստանի։

Կեանքը ազգին չխնայեց այդ ծերը,
Անպակաս ունենանք այդպիսի տէրը.
Երանի՜, նրան հետևեն շատերը,
Լինին ճշմարիտ, ազգասէր, գործունի։

Բախտի միջոցով, ճարած գումարով,
Իրան ազգին օգնել ցանկացաւ սիրով.
Ազգը երջանիկ է այդպիսիներով,
Կեցցէ՛ մայրը, որ այդպէս որդեծին։



Օրհնուի օդը և հողը, ջուրը Վանի,
Ձեզպէս հոտով ծաղիկներ կը բուսանի.
Երանի՜ այն ազգին, հազար երանի՜,
Ինչ ազգ ձեզ պէս հաւատարիմներ ունի։

Արքայութեան արժան անէ քեզ Աստուած,
Հոգւոյդ աչքերը բաց, մարմնոյդ փակած.
Կյիշենք միշտ, մեզ մօտ կլինես կանգնած,
Թո՛ղ նա մոռանայ քեզ, ով Աստուած չունի։

Երգիչ Հազրու հոգին վկայում,
Ձեզ կորցնելով՝ մենք կուլանք ներկայում.
Ձեր փոխարէն՝ Աստուած տայ ապագայում
Հայոց բարի գործող, ազնիւ ծերունի։

## ԲԱՅԱԹԻ.

Ա՜խ, սիրելի, կատարեմ գործըս, կարգով կատարեմ,
Մաքուր, արդար քաղաք եմ, ամբիծ սարի կատար եմ.

## ԹԷՁԼԻՍ.

Աշխարհի մէջ ապրուստը ինչպէս է էժան,
Կամ թէ ինչպէս թանգ կգնուի հաղըի,
Ինչ հզօր է աճից՝ չի գալ երեւան,
Ով է անահ՝ կը յայտնուի հաղըի։

Խայտառակութիւնով ապրուստն է էժան,
Մարդկութիւնով թանգ կգտնուի «սուտքեարի»,
Մեղաւոր, հզօր չի գալ երեւան,
Արդար, անահը կ՚ատուի սուտքեարի։

Այն ի՞նչ է, որ ամէն ինչից բարձրն է,
Ում աստիճանը ամէնից ցածրն է,
Այն ի՞նչ է, որ ամէն բանից քաղցրն է,
Ի՞նչն է, որով կ՚գտնուի հաղըրի։

Գիտութիւնը ամէն ինչից բարձրն է,
Իշու աստիճանը ամէնից ցածրն է,
Հանգիստ ապրելը ամէնիցը քաղցրն է,
Դրանտ՝ որով կ՚գտնուի «սուտքարի»։

Ի՞նչն է ստացական, ի՞նչն է բնական,
Ի՞նչն է կարճ կամ ի՞նչն է յաւիտենական,
Այն ո՞վ է ամէն մարդու սիրեկան,
Այն ո՞վ է, որ կմատնուի հաղըի։



Ուսումըն ստացական, խելքը բնական,
Կեանքը կարճ է, անունը յաւիտենական,
Կեղծաւորն է ամէն մարդու սիրեկան,
Ուղղախօսը կ՚մատնուի «սուտքարի»։

Այն ո՞վ է, որ միշտ, անդադար կը բանի,
Ո՞վ է, որ այս հանելուկը կհանի,
Ո՞վ է մեռած կամ ո՞վ է կենդանի,
Ո՞վ է, որ նոր պէտք է ծնի հաղըի։

Աշխատասէրն է՝ անդադար կ՚բանի,
Հաղըրն է՝ այս հանելուկը կհանի,
Անցեալը մեռած, ներկան կենդանի,
Ապագան նոր — պէտք է ծնի «սուտքարի»։

1879 ամի, ապրիլի 6-ին.

## ՄՈՒԽԱՄԲԱՋ.

Ա՜խ, իմ պայծառ օթեւան, ինձ միջից թռցրին,
Քեզնից կարօտ թողին, երկրէ երկիր կորցրին,
Առիւծասիրտ քաջութեան տաք արիւնըս սառցրին,
Ուրախ սիրտըս տրտմեցաւ, ծիծաղըս լաց դարձրին,
Կանաչ, կարմիր հագուստըս հանեցին, սեւ հագցրին,
Ազնիւաձեւ մեծցածիս, մշակի տեղ բանեցրին։

Քանի որ գլխիդ կայնած հարազատ տէր ունէիր,
Թշնամուն կործանելու պատրաստ սուսեր ունէիր,
Շատերէն քեզ մօտ ծանօթ ազնիւ ընկեր ունէիր,
Մինչև անգամ օտարի մօտ էլ դու սէր ունէիր,
Մուլթըդ ցերեկի նման՝ ոչ թէ գիշեր ունէիր,
Այս մէջըդ լոյս չէ փայլում, վառ ճրագըդ հանգցրին։

Ես առանց ի քեզ կուլամ, արդեօ՞ք դու կուլաս՝ թէ չէ,
Թշնամուց բաւականին քաղեցի՞ր վնաս՝ թէ չէ,
Ես մօտըդ գալ եմ ուզում, դու էլ կուզես գա՞լ՝ թէ չէ,
Կեանքըս քեզ եմ նուիրում, պէտք է ինձ տեղ տա՞ս՝ թէ չէ,
Էլ ո՞վ է քեզ միտը բերում աշխարհումը կա՞ս՝ թէ չէ,
Բոլորովին մոռացան, էլ ոչ ոք քեզ չը հարցրին։

Շինութիւնըդ քանդեցին, քեզ շինեցին աւերակ,
Մէջըդ բնակողների վերայ թափեցին կրակ,
Սիրով բարեկամներդ էլ դարձել են չար հակառակ,
Բերանէ բերան ընկար, եղել ես այլոց առակ,
Ընտիր, ազնիւ անունդ հաշւում է հասարակ,
Ժողովուրդիդ ամենքին մէկ բանտի մէջ մտցրին։

Ա՜խ, արդեօք կրկին անգամ կտեսնեմ քեզ զարդարուած
Մեղաւոր ժողովուրդըդ խստակ, մաքուր, արդարուած,
Աւերակ դարձնողիդ բանեցնէիր չարչարուած,
Թշնամիդ նկատելով՝ լինէր լոյսը խաւարուած,
Այն ժամ Հազրու խօսքը կլինէր հաստատ կատարուած,
Ինձնից յետոյ ասէին, փափագըն առած մեռցրին։

1879 ամի, մարտի 15-ին.



## ԲԱՅԱԹԻ.

Ա՜խ, սիրելի, անբաց եմ, սիրտըս փակուած անբաց եմ.
Անձրևային եղանակի նման օրի ամպամած եմ։

## ՊԱՏԿԵՐ ԴԱՍՏԱՆԻ.

Ես մանկի վշտերով լքըլ·
Մէկ այգում տեսայ մէկ գեղեցիկ սոխակ,
Գրաւեց իմ ուշադրութիւնըս նա,
Որ երգում էր անչափ անոյշ եղանակ։

Եղանակը անչափ ազդու, քաղցրն էր,
Քիչ կ՚մնար խելքս գլխէս փախցնէր,
Կայնած տեղը անդադար կ՚դողցնէր,
Բարկացած բերանից թափում էր կրակ։

Նա կ՚երգէր, ձայնը հիանալի էր,
Իբրև մարդ կ՚խօսէր, զարմանալի էր,
Կարծես, խօսքերը ինձ հասկանալի էր,
Ես նրա մէջ որոշեցի մէկ կտակ։

Սիրտըս ուռաւ, անպատասխան մնացի,
Մօտենալով դէպի նրան գնացի,
Երգի՜ր, դու էլ ինձպէս թշուառ, ասացի,
Ձայնս նրան արգելք եղաւ մէկ տեսակ։

Նա տեղափոխուեց, գտաւ մի ուրիշ ծառ,
Առաջուայ ծառից գեղեցիկ կայտառ,
Մարդաբնակ այգին տեսնում էր անտառ,
Դարձեալ իւր երգը երգում էր շարունակ։

Ես զգացի նրա ինձնից քաշուելը,
Եւ ինձ իրան մեծ թշնամի հաշուելը,
Որ գիտենայի իմ կեանքիս մաշուելը՝
Չէի կարող թողնել ես նրան մենակ։

Ես ինձ սոխակի մօտ շատ յիմար գտայ,
Որ ես նրան խանգարելու ճար գտայ,
Նրան մօտենալու նոր հնար գտայ,
Սկսեցի երգել «Ձայն տուր, ո՜վ ծովակ»։

Այնուհետեւ խեղճ սոխակը դադարեց,
Հերթ տալով երգչութեան կարգ կատարեց,
Երբ ինձ իրան արհեստակից համարեց,
Ասաւ, երգի՛ր, սիրելի ազգային մշակ։

Իմ երգըս նրան շատ հետաքրքիր էր,
Ինչպէս ես նրան, նա էլ ինձ կ՚սիրէր,
Բացի մեզ այգում լռութիւն կ՚տիրէր,
Մեր երգելը բնութեան չէր հակառակ։

Մինչև հիմի ինձ թշնամի հաշուողը,
Այժմ մօտեցաւ ինձնից հեռու քաշուողը,
Նա էլ իմ ցաւերիս պէս ցաւերով մաշուողը,
Դէպի երկինք բարձրացուց աղաղակ։

Ես ասացի, սոխակ, եղբայր հոգաւոր,
Ես քեզ ծառայ, խնդրեմ, ո՜վ իմ թագաւոր,
Ինչո՞ւ կ՚երգէիր իբրև սգաւոր,
Պատճառըն ի՞նչ էր, պատասխանիր ինձ շիտակ։



Ասաւ, այս այգումն եմ ծնուել, մեծացել,
Սա է տուել ինձ միշտ ջուր էլ ու հաց էլ,
Միշտ գեղեցիկ եմ տեսել՝ ուրախացել,
Այժմ աչքիս երեւում է աւերակ։

Ասացի, դու երգում էիր անդադար,
Ինձ որ տեսար, ինչո՞ւ դու հեռո՛ւ փախար,
Ինձնից վախենալու իմ մէջըս ի՞նչ գտար,
Խռովելով՝ սրտիս զարկեցիր դանակ։

Ասաւ, դուք էլ միմեանց ահից չէք երգում,
Ես մենակ թռչուն՝ ինչո՞ւ ես անարգում,
Գուցէ գալիս էիր՝ չթողնես այգում,
Զարկես, ինձ ըսպանես, իբրև աւազակ։

Ես ասացի, ճիշտ պէտք է հաւատացած,
Ամեն կենդանի կուզէ իւր համար կեանք,
Բայց մարդու մէջ ո՞ւր է այնքան խղճմտանք,
Որ թողնեն նրանք էլ հնչեն մէկ թութակ

Հաջիր։

1882 ամի, յուլիսի 7-ին։

## ՂՕՇՄԱՅ.

Ա՜խ, մեռան ծնողներիս զաւակները,
Ես մնացի, նոցա դուստր Շուշանը,
Այլ ես ո՞վ պէտք է լինի իմ տէրը,
Միշտ օգնեցէք կաղաղակէ իմ բերանը։

Աղաղակըս էլ չէ լսում իմ տէրըս,
Ա՜խ, կորուցի իմ սիրելի ընկերըս,
Երբոր մեռան բոլոր բարեկամներըս,
Այն օրուանից ոչ ոք չկայ մեր տանը։

Որբ, ողորմելի, անտէր ես մնացի,
Անօգնական, յուսահատ, կարօտ հացի,
Ում մօտ օգնութիւն խնդրելու գնացի,
Հայհոյեանքներ ըստացայ պատասխանը։

Եթէ Աստուած իմ մեղքերս կըների,
Ինձ համար ուրախութեան լուր կըբերի,
Գօղէթնեմ Գէնարդենի ձեռքին գերի,
Կ՚սպասսեմ, գայ, ազատէ Ժան Վալժանը։

Ա՜խ, մինչև երբ ես պէտք է մնամ տկար,
Երբ պէտք է գտնեմ բարեկամ ինձ համար,
Գուցէ արժան եմ այս ցաւին, ինձ համար
Այս է վճռել Աստուծոյ դատաստանը։

Ամեն մարդ կ՚սիրէ ազատութիւնը,
Դժողքը ինձ, այլոցն է արքայութիւնը.
Այն է երգիչ Հագրու ուրախութիւնը,
Երբ կըտեսնի իւր փոքրիկ բուրաստանը։

1888 ամի, Նոյեմբերի 15-ին.



## ԹԻՖԼԻՍ.

(Հարց և պատասխան).

Այն ո՞վ է, որ երգիչ սիրեկան ունի,
Նրան լաւ կուզէ Թագաւորի ցեղէցը.
Ո՞վ է՝ միշտ ուրիշի վատը կտեսնի,
Իւր գերանն է փոքր ուրիշի ծեղէցը։

Այդ վարդն է, որ երգիչ սիրեկան ունի,
Նրան լաւ կուզէ Թագաւորի ցեղէցը.
Անքննող, կարճամիտ մարդու համար
Իւր գերանն է փոքր ուրիշի ծեղէցը։

Ո՞ւմ որդիքներին իրար հասկացրին,
Իրանց շնորհալի եղբօրը կորցրին.
Ի՞նչ մարդիկ էին, որ իրար հարցրին,
Կամ ո՞վ էր, որ սարը շարժեց տեղէցը։

Յակոբի որդիքը իրար հասկացրին,
Իրանց սիրեկան եղբօր Յովսէփին կորցրին.
Երկու ճգնաւոր էին՝ իրար հարցրին,
Սրապիօնն էր՝ սարը շարժեց տեղէցը։

Ո՞վ էր, գտաւ, կորցրեց, էլ չգտաւ,
Ո՞վ էր, մըտաւ, դուրս եկաւ, էլ չմտաւ,
Ո՞վ էր, կեանքը հատաւ, մեղէն չհատաւ,
Այն ո՞վ էր, ազատուեց կնոջ մեղէցը։

Աբրահամը գտաւ, կորցրեց, էլ չգտաւ,
Յովհանն էր՝ մտաւ, դուրս եկաւ, էլ չմտաւ,
Յովբի կեանքը հատաւ, մեղէն չհատաւ,
Ղամէքն էր՝ ազատուեց կնոջ մեղէցը։

Այն ո՞վ էր, որ մաքրուեց այնչափ մեղքից,
Այն ո՞վ էր, որ նիւթ ըստացաւ ծաղկից,
Այն ո՞վ էր, որ գեղ գնաց քաղաքից,
Այն ո՞վ էր, որ քաղաք եկաւ գեղից։

Դաւիթն էր՝ մաքրուեց այնչափ մեղքից,
Մարիամն էր, որ նիւթ ըստացաւ ծաղկից,
Մահջութիւնն էր՝ գեղը գնաց քաղաքից,
Հագիրն էր, որ քաղաք եկաւ գեղից։

1879 ամի, նոյեմբերի 8-ին.

## ՂՕՇՄԱՑ.

Իմ այսքան վշտերուս այս է պատճառը,
Մէջ սրտիս բորբոքեալ անթիւ հուր է,
Ի՞նչ անէ գիտնական, ստրուկ անճարը,
Տգիտաց ժամանակը ազնիւը կոյր է։

Սիրելի, դու ես ինձ համար թագաւոր,
Մեզ համար այնպիսի սէրն է հարկաւոր,
Մինչև հիմայ կայինք կերպով հոգաւոր,
Մեր առաջուայ սէրի հաշիւը ո՞ւր է։

Հագիր, հնազանդ կա՛ց, մի՛ լինիր հպարտ,
Որ լինես ամէն փորձանքէն ազատ,
Վայրենի գազանին ի՞նչ կանէ խրատ,
Չհասկացող մարդուն՝ պատիւը զուր է։

1877 ամի, յունիսի 10-ին.



## ՂՕՇՄԱՑ.

Հայ եղբայր, հաստատ հայ արիւն ունեցող,
Քեզպէս քո ընկերիդ էլ խրատիր,
Նա էլ լինի քեզպէս անուն ունեցող,
Ինչպէս որ միշտ քո գովասանքը շատ է։

Եղբօրդ ցաւերը պէտք է դու լըգաս,
Ամէն խօսողին անփորձ չըհաւատաս,
Պարզ հայերէն խօսալուն չըտանուլ տաս,
Լեզուով հայը՝ հայ չէ, հոգուն նկատէ։

Հագիր, եղբայրդ քեզ համար կը հոգայ,
Բերանից աղբիւրի պէս բառ կը բղխայ,
Ի՞նչ եմ անում, դատարկ լեզուն բլբլայ,
Հոգին՝ պէտք է հայութիւնը հաստատէ։

1880 ամի, ապրիլի 12-ին.

## ԴԱՍՏԱՆԻ.

Ո՜վ մարդ, խոնարհ եղիր և սիրէ խրատ,
Եթէ գործըդ ձախ գայ, ինձնից պահանջիր,
Ծուլութիւն մի՛ անիր, բանիդ կաց հաստատ,
Եթէ գործըդ ձախ գայ, ինձնից պահանջիր։

Ինչ որ քեզ յարմար է, այն շորը հագիր,
Երախտամոռ մարդու ճակատին թքիր,
Քեզ անարժան բանին ձեռքըդ մի ձգիր,
Եթէ գործըդ ձախ գայ, ինձնից պահանջիր։

Տաք ընդունիր, մի ցաւիր պաղի համար;
Ալյուրդ մի խափանիր մաղի համար,
Այսօր բանդ մի՛ թողնիր վաղուայ համար,
Եթէ գործըդ ձախ գայ, ինձնից պահանջիր։

Աւելնորդիցըդ քաղցածին կերցրու,
Ականջդ դէպի խրատը դարձրու,
Զգիտցած բանըդ գիտցողին հարցրու,
Եթէ գործըդ ձախ գայ, ինձնից պահանջիր։

Մարմնուդ համար հոգիդ մի՛ կորցնիր զուր,
Հաւատըդ, օրէնքդ պաշտպանիր մաքուր,
Պայմանիդ հաստատ կաց, ուղիղ առուտուր,
Եթէ գործըդ ձախ գայ, ինձնից պահանջիր։

Բարի մարդ լինել աշխարհում աշխատիր,
Աստուծոյ չսիրած գործերը ատիր,
Քանի կենդանի ես՝ բարին մտադիր,
Եթէ գործըդ ձախ գայ, ինձնից պահանջիր։

Մարդկութիւնդ դու չնուիրես գանձին,
Այն պաշտէ դու հաստատ, ինչ որ է անգին,
Պէտք եկաւ, կեանքդ չխնայես ազգին,
Եթէ գործըդ ձախ գայ, ինձնից պահանջիր։

Այս խրատներին դու հաստատ կացիր,
Քեզ լսողի խօսքը դու էլ իմացիր,
Եղբօրդ աջողութեանը ուրախացիր,
Եթէ գործըդ ձախ գայ, ինձնից պահանջիր,

Քեզ համար եկել է, դու էլ ուղարկէ,
Ինչպէս որ քեզ համար կպատկանի հարկէ,
Վատութիւնին լաւութիւն առաջարկէ,
Եթէ գործըդ ձախ գայ, ինձնից պահանջիր։



Հայրենիքիդ սահմանիցը չանցնես,
Սրտակից բարեկամիդ չկորցնես,
Թշնամու վատ խօսքերը չվերցնես,
Եթէ գործըդ ձախ գայ, ինձնից պահանջիր։

Քեզանից խելօքի մօտ քաշէ սանձդ,
Աստուծոյ ճանապարհին մի խնայիր գանձդ,
Սիրէ քո ընկերիդ, ինչպէս քո անձդ,
Եթէ գործըդ ձախ գայ, ինձնից պահանջիր։

Հազիր, մի՛ լար վատին կախածի համար,
Ցաւիր բարի մարդուն ծախածի համար,
Բռնածդ մի՛ թողնիր փախածի համար,
Եթէ գործըդ ձախ գայ, ինձնից պահանջիր։

1875 ամի, փետրվարի 9-ին.

## ԴԱՍՏԱՆԻ.

Ես աղաւնի, դու ուրուր, քեզ չեմ սիրում,
Քի՜շ, քի՜շ, ուրուր, ձագս չտանես, կորի՛ր.
Էլ ի՞նչ իրաւունք, ո՞վ ես դու՝ ինձ տիրում,
Քի՜շ, քի՜շ, ուրուր, ձագս չտանես, կորի՛ր։

Քո շւաքդ անգամ տեսնել չեմ ուզում,
Քեզ տեսնելիս դէպի բունս եմ վազում,
Հաղիւ գլուխս ազատելու եմ վազում,
Քի՜շ, քի՜շ, ուրուր, ձագս չտանես, կորիր։

Ո՜վ դու անգութ, անխիղճ, անխնամ թռչուն,
Այդ վատութիւնով՝ դու չես ըստանար անուն,
Մի՛ ատիր Աստուծոյ սիրած աղաւնուն,
Քի՜չ, անիրաւ, ձագս չտանես, կորիր։

Մութ է օրս, յոյս չկայ լուսանալու,
Տկար եմ, ճար չունիմ բերան բանալու,
Դու էիր պակաս ինձ թշնամանալու,
Քի՜չ, քի՜չ, ուրուր, ձագս չտանես, կորիր։

Շատ մարդ քեզ մէկ արդար թռչուն կարծի,
Այդ քու գործովդ Աստուած քեզ անծի,
Ես ո՞վ, դու ո՞վ, մէկ քեզ ու քեզ մտածիր,
Քի՜չ, հեռացիր, ձագս չտանես, կորիր։

Մեզանից էլ զօրեղ թռչուններ շատ կան,
Գնանք ես ու դուն նրանց մօտ դատաստան,
Տեսնենք՝ թէ ինչ ունիս տալու պատասխան,
Քի՜չ, քի՜չ, ուրուր, ձագս չտանես, կորիր։

Այսքան բան, որ իմ գլխին կբերես,
Մէկը որ դու լինես իմ տեղը՝ կներես,
Չէ՞ որ դու էլ ինձպէս ձագերի տէր ես,
Քի՜չ, անիրաւ, ձագս չտանես, կորիր։

Ես շատ եմ թշնամու ձեռիցը լացել,
Մինչև այսօր նեղութեան մէջ կացել,
Այնքան ձագերիցս՝ այս է մնացել,
Քի՜չ, քի՜չ, ուրուր, ձագս չտանես, կորիր։

Հերիք չէ՞, որ բունս քարուքանդ արիր,
Ինձ ցրտումը թողեցիր, հիւանդ արիր,
Խեղճ ձագերիս կացարանը բանդ արիր,
Քի՜չ, քիչ, ուրուր, ձագս չտանես, կորիր։



Կ'փոխուի դարը, միշտ այսպէս չի մնալ,
Հզօրը տկարի վերայ չի գնալ,
Միթէ անասունը գութ չի ունենալ,
Քի՜չ, քի՜չ, ուրուր, ձագս չտանես, կորիր։

Աչդ ինձ շղթայից ամուր է կապել,
Հիմայ էլ ձագիս վերայ ես պարապել,
Ինձ էլ կուզես խաբես, շատին ես խաբել,
Քի՜չ, քի՜չ, ուրուր, ձագս չտանես, կորիր։

Կ'սիրենք եկեղեցի՝ Աստուծոյ տունը,
Զանգակատան պատերումն է մեր բունը,
Հենց նրանից կտրուեց մեր տան սիւնը,
Քի՜չ, հեռացիր, ձագս չտանես, կորիր։

Ամեն կենդանի մեր միսը կծամի,
Մարդ չկայ, որ մեզ համար վատ չկամի,
Մինչև անգամ կատուն էլ է մեզ թշնամի,
Քի՜չ, անիրաւ, ձագս չտանես, կորիր։

Գնա՛, դարձեալ հաւի ձագերիցը տար,
Նրանք գետնին են ման գալիս միշտ խաւար,
Աղաւնին քեզի պէս թռչունին չէ յարմար,
Քի՜չ, քի՜չ, ուրուր, ձագս չտանես, կորիր։

Այս ահը մեզ շատ ես տուել, էլ չտաս,
Թէ չէ, մէկ անգամ դու էլ մեզ պէս կուլաս,
Գնա՛, գնա՛, միւս անգամ էլ չգաս,
Քի՜չ, քի՜չ, ուրուր, ձագս չտանես, կորիր։

Միշտ քո բախտդ այսպէս յաջող չի բանի,
Դարձեալ ասում եմ՝ վատութիւն մի՛ անի,
Թէ չէ՝ Հազրուն կասեմ, աչքդ կ'հանի,
Քի՜չ, քի՜չ, ուրուր, ձագս չտանես, կորիր։

1883 ամի, յուլիսի 23-ին.

## ՄՈՒԽԱՄԲԱՋ.

Արի՛, սիրելի զաւակս, որդեակ,
Անուշահոտ մանուշակս, որդեակ,
Գիտե՞ս, որ դու ես իմ ուրախութիւնս,
Քեզնից առնեմ իմ փափագս, որդեակ։

Քեզ համար եմ խաւարացրել կեանքս,
Դու ես աշխարհիս վրայ իմ պարծանքս,
Զուր չը անցնի իմ ողջ աշխատանքս,
Լսիր իմ պատմած առակս, որդեակ։

Յիշեր իմ իշխանութեան օրերը,
Որ կդողար ինձնից սար ու ձորերը,
Հիմայ ընկել եմ խոր մութ հորերը,
Հասել է իմ ժամանակըս, որդեակ։

Մինչև այսօր Աստծու հրամանովը,
Նիզակակիցներիս պայմանովը,
Ո՞վ էր կարող անցնել իմ սահմանովը,
Զուր չէր անցնի իմ գնդակս, որդեակ։

Դու քեզ նմանեցրու քաջ Արամին,
Ջնջիր աշխարհից ազգիդ հըկամին,
Ինձնից յետոյ չ՚զօրանայ թշնամին,
Քեզ եմ յանձնում թուր-նիզակս, որդեակ։

Մեռնում եմ, որ չտեսնեմ քո մահը ես,
Դու էլ մեռիր, որդուդ մահը չտեսնես,
Ազգասիրութեան է պահանջն այսպէս,
Դու ես բարի յիշատակըս, որդեակ։



Հազարը մեռնի, Հազիրը ապրի՝ ցաւ է,
Հազիրը մեռնի, հազարը ապրի՝ լաւ է,
Անձուրացը թշնամու կըգրաւէ,
Վարդանի պէս նահատակըս որդեակ։

1882 ամի, ապրիլի 8-ին.

* * *

Ահա հասել է գարունը,
Բացւում են ամէն ծաղկունք,
Միայն սառն է մեր արիւնը,
Դեռ կըննջենք իբրև մանկունք։

Ամենայն ինչ ստացաւ կեանք,
Թռչունները դուրս եկան բնից,
Մենք չենք կամենում արթնանանք,
Մեռելային խորը քընից։

Ուրեմն մեզ համար ի՞նչ գարուն,
Դարձեալ ձմեռ է ու ձմեռ,
Չունեցանք մարդկութեան անուն,
Չէ հասել ժամանակը դեռ։

Քնից արթնացած սոխակը
Աւետիս է տալիս վարդին,
Նրանցն է ցաւ ու կրակը,
Ո՞ւր է այդ փառքը հայ մարդին։

Այս տարուայ գարնան նշանը,
Քարերին կանաչացըրուց,
Բայց մեզ անգութ բնութեանը,
Աւա՜ղ, չճանաչացրուց։

Նա կըցանի, նա կըհնձի
Որ մարդու գործը որ ձախ չէ,
Ճշմարիտ խօսողի մէկ ձի
Շուտով ասէ, հեծնէ՝ փախչէ։

Գարնան շունչը ամեն մարդ զգաց,
Իրան գործը շարունակեց,
Կարծես, մենք լինենք կախարդուած,
Սատանան մեր սիրտը փակեց։

Ուզում ենք ծածկաբար պահել,
Չենք ցանկանում բաց մտածել,
Մերըն է օտարին շահել,
Հարկաւոր չէ հաց մտածել։

Դժողքը մեզ է վիճակուած,
Իսկ օտարին — արքայութիւն,
Մենք տկար, մեր տէրը մեռած,
Մեզ համար չէ ուրախութիւն։

Զատիկն անցաւ, մենք դեռ պաս ենք,
Ուրախ օրեր տղայոց, ծերոց,
Ախորժակ չունենք, որ ասենք՝
Քրիստոս յարեաւ ի մեռելոց։



* * *

Մէկ ցաւալի լուր ըստացայ Պօլսից,
Յայտնում են, մահացել է Ադամեանը,
Ուրեմն, կորուեց իսպառ մեր յոյսից,
Հայոց ընտիր, անուանի դերասանը։

Ամեն կողմով յուսահատուած հայերը,
Այս կողմով էլ վիրաւորեց մեզ Տէրը,
Խլեց հայոց Թատրոնի վառ լապտերը,
Մեծ բան կորցրուց ամբողջ հայաստանը։

Թէպէտ նորան ես այնքան չէի սիրում,
Բայց այժմ առանց լաց չեմ համբերում,
Ես շնորհքն ու տաղանդն եմ բերան բերում,
Որ շատ ուշ կըտեսնենք նորա նմանը։

Այսուհետև շատ շատ տարիներ կ՚անցնի,
Էլ ոչ մէկ մայր մեզ Ադամեան չի ծնի,
Թատրոնը այլ ևս նորան չի գտնի,
Արդէն նորան կլանեց գերեզմանը։

Ադամեանն էր մեր Թատրոնի պարծանքը,
Չեն մոռանալ եռանդով աշխատանքը,
Նա Թատրոնի բեմին զոհեց իւր կեանքը,
Կըվկայէ ամեն մարդու բերանը։

Լան հայերը Կոստանդինօպոլսի,
Ռուսաստանի, Պարսկաստանի, Մասիսի,
Ո՛վ խիղճ ունի, Թո՛ղ ճշմարիտը խօսի,
Եթէ որ ես յիշում եմ անարժանը։

Ո՛րքան յիշես, այնքան քաշիր ախ, Հագիր,
Որոնէ՛ և Նորա Նմանը գտիր,
Համով «Համլէտ» «Օթելլօ» և «Արքայ Լիր»
Երազումս պէտք է տեսնեմ մեր տանը։

ՎԵՐՋ

ՅԻՇԱՏԱԿ
ԻՒՂԱԲԵՐ
ՏԵՐԲԵԱՆ – ԻՆՃԻԿԵԱՆԻ
23 ՅՈՒՆՈՒԱՐԻ 1929 ԹՈՒԻ

Ի ՅԻՇԱՏԱԿ
ԻՒՂԱԲԵՐ
ՏԵՐԲԵԱՆ – ԻՆՃԻԿԵԱՆԻ
23 ՅՈՒՆՈՒԱՐԻ 1929 ԹՈՒԻ

# ՑԱՆԿ

1. Դիւանի . . . . . . . . . . . . . . . . . . 3.
2. Թէջլիս . . . . . . . . . . . . . . . . . . 4.
3. Դիւանի . . . . . . . . . . . . . . . . . . 4.
4. Ղօշմայ . . . . . . . . . . . . . . . . . . 5.
5, Մուխամբազ . . . . . . . . . . . . . . . . 6.
6. Ղօշմայ . . . . . . . . . . . . . . . . . 8.
7. Սամայի . . . . . . . . . . . . . . . . . 8.
8. Դուբէյթի . . . . . . . . . . . . . . . 10.
9. Մուխամբազ . . . . . . . . . . . . . . . 11.
10. Դասիդանի . . . . . . . . . . . . . . . 12.
11. Ղօշմայ . . . . . . . . . . . . . . . . 15.
12. Մուխամբազ. . . . . . . . . . . . . . . 16.
13. Դօբէյթի . . . . . . . . . . . . . . . . 18.
14 Դաստանի . . . . . . . . . . . . . . . . 19.
15. Մուխամբազ . . . . . . . . . . . . . . 21.
16. Ղալանդարի . . . . . . . . . . . . . . 23.
17. Մուշտազատ . . . . . . . . . . . . . . 24.
18. Ղօշմայ . . . . . . . . . . . . . . . . 25.
19. Դիւանի . . . . . . . . . . . . . . . . 25.
20. Ախ, էլի մէկ աստղը թռաւ երկնքից . . . . . 26.
21. Բայաթի . . . . . . . . . . . . . . . . . 27.
22. Թէջլիս . . . . . . . . . . . . . . . . 28.
23. Մուխամբազ . . . . . . . . . . . . . . 29.
24. Բայաթի . . . . . . . . . . . . . . . . 31.
25. Պատկեր դաստանի . . . . . . . . . . . 31.
26. Ղօշմայ . . . . . . . . . . . . . . . . 34.
27. Թէջլիս . . . . . . . . . . . . . . . . 35.
28. Ղօշմայ . . . . . . . . . . . . . . . . 36.
29. Ղօշմայ . . . . . . . . . . . . . . . . 37.
30. Դաստանի . . . . . . . . . . . . . . . 37.
31. Դաստանի . . . . . . . . . . . . . . . 39.
32. Մուխամբազ . . . . . . . . . . . . . . 42.
33. Ահա հասել է գարունը . . . . . . . . . 43.
34. Մէկ ցաւալի լուր ըստացայ Պօլիսից . . . 45.

30к,